ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնահատող հանձնաժողովի նիստի (Հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրություն)

ք. Երևան

27.01.2022թ.
Ժամը՝ 14:00-ին

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ *Էդուարդ Տոնիկյան*

Անդամներ՝ *Լևոն Մուրադյան*
Արման Գևորգյան
Հայկ Խուրշուդյան
Մովսես Ասրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ *Էդգար Ասրյան*

Օրակարգ՝

1. ԳՀ ընթացակարգի հայտերի գնահատման մասին.

1.1 Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության 2022 թվականի կարիքների բավարարման համար՝ **հակահրդեհային համակարգի** ձեռքբերման նպատակով **«ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/02»** ծածկագրով գնման ընթացակարգի հայտը բացվել է Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության շենքում, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեում՝ http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով, 2022 թվականի հունվարի 14-ին, ժամը 14:00-ին:

1.2 http://www.armeps.am/ էլեկտրոնային կայքով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպություններ.

N	Մասնակցի անվանումը	Հեռախոսահամար
1	«ՋԻ-ԷՍ-ԱԻ» ՍՊԸ	+37455990991
2	«ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԱՐՏ» ՍՊԸ	+37498692023
3	«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	+37499455131, +37460467677

2. Տեղեկություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ.

2.1 Հայտի փոփոխություններ, հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

3. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

3.1 Հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը ներկայացված են, էլեկտրոնային եղանակով ստորագրված են մասնակիցների կողմից:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված հրավերի պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1 «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «ՋԻ-ԷՍ-ԱԻ» ՍՊԸ-ի, «ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԱՐՏ» ՍՊԸ-ի և «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներբեռնած հայտերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

1) «ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից ներբեռնած հայտի իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է համաձայն Հավելված 1.1, սակայն հրավերով սահմանված է Հավելված 1.3: Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) առաջարկվող ապրանքների նկարագրերը հստակ ներկայացված չեն՝ օգտագործված են **«առնվազն, առավելագույնը, նվազագույնը, ոչ պակաս քան, կամ համարժեք»** բառերը:

2) «ՍՕՍ Սիսթեմս» ՍՊԸ-ի կողմից ներբեռնած հայտի Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) առաջարկվող գնման ապրանքների քանակները ներկայացված են տիրույթով, օգտագործված են նաև **«առնվազն, առավելագույնը, նվազագույնը, ոչ պակաս քան»** բառերը:

3) «ՋԻ-ԷՍ-ՍԻ» ՍՊԸ-ի կողմից ներբեռնած հայտի Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) մակնիշը սյունակը լրացված չէ:

4.2 Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- 19.01.2022թ.-ին կասեցնել հայտերի գնահատման նիստը,
- համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով (ոչ ավտոմատ ծանուցում) ծանուցել «ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԱՐՏ» ՍՊԸ, «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ և «ՋԻ-ԷՍ-ՍԻ» ՍՊԸ-ներին առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս.թ. հունվարի 20-ը ժամը 24:00-ն) շտկել անհամապատասխանությունները:

5. Կասեցված նիստի վերսկսման վերաբերյալ.

5.1 «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կասեցված նիստը վերսկսվել է հունվարի 21-ին, ժամը 16:00-ին, ք. Երևան, Մաշտոցի 47 հասցեում, 5 սենյակում:

6. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած շտկված փաստաթղթերի՝ սահմանված հրավերի պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 Մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները:

7. Տվյալներ մասնակիցների կողմից առաջարկած գների վերաբերյալ.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակից	Նախահաշվային գին	Առաջարկած գին		
				Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1.	Հակահրդեհային համակարգ	«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	11540000	9543500	1908700	11452200
		«ՋԻ-ԷՍ-ՍԻ» ՍՊԸ		12500000	2500000	15000000
		«ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԱՐՏ» ՍՊԸ		20500000	4100000	24600000

8. Միաժամանակյա բանակցությունների անցկացման վերաբերյալ.

8.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝

Հանձնաժողովը որոշեց.

- 2 աշխատանքային օրով կասեցնել Գնահատող հանձնաժողովի նիստը,
- համակարգի միջոցով ծանուցել մասնակիցներին և հրավիրել ՀՀ պետական վերահսկողական ծառայություն մասնակցելու գների նվազեցման շուրջ վարվող միաժամանակյա բանակցություններին:

9. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցության մասին.

9.1. «ՊՎԾ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գների նվազեցման շուրջ բանակցությունը սկսվել է ՀՀ պետական վերահսկողական ծառայությունում 2022 թվականի հունվարի 25-ին, ժամը 16:00-ին: Բանակցությանը մասնակցել են «ՋԻ-ԷՍ-ՍԻ» և «ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ների ներկայացուցիչները, իսկ «ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԱՐՏ» ՍՊԸ-ի կողմից մասնակից չի ներկայացել:

10. Տվյալներ բանակցությունների արդյունքում մասնակիցների կողմից առաջարկած գների վերաբերյալ.

ՀՀ դրամ.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակից	Նախահաշվային գին	Առաջարկած գին		
				Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1.	Հակահրդեհային համակարգ	«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	11540000	8200000	1640000	9840000
		«ՋԻ-ԷՍ-ՍԻ» ՍՊԸ		8300000	1660000	9960000
		«ՍԵՔՅՈՒՐԻԹԻ ԱՐՏ» ՍՊԸ		20500000	4100000	24600000

11. Տվյալներ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Մասնակցի զբաղեցրած տեղը	Մասնակցի տվյալները	Չափաբաժինը
1-ին	«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ	1
2-րդ	«ՋԻ-ԷՍ-ՍԻ» ՍՊԸ	1

Ուսումասիրելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները, Հանձնաժողովը որոշեց.

«ՍՕՍ ՍԻՍԹԵՄՍ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Է. Տոնիկյան

Անդամներ՝ ---------- Լ. Մուրադյան

---------- Ա. Գևորգյան

---------- Հ. Խուրշուդյան

---------- Մ. Ասրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Է. Ասրյան